

«Հրեշներ» խաղը

Էմիլը սիրում է համակարգչային խաղերը: Բայց նա գիտի, որ շատ խաղալ, իհարկե, վնասակար է, եթե անգամ չհաշվենք ժամանակի վատնումը: Թեկուզ կան նաև ինչ-որ օգտակար հմտություններ զարգացնող խաղեր: Դրա համար նա խաղում է խիստ չափավոր, որպեսզի դասերն էլ չտուժեն՝ շաբաթ օրերին, երեկոյան կես ժամով, եթե, իհարկե, codeforces-ում մրցույթ չկա, և կիրակի օրերին մեկ ժամով, եթե, իհարկե, չի գնում արշավի: Նա ոչ մի խաղ երկար չի խաղում, պարզպես, փորձում է տարբեր խաղեր:

Վերջերս Էմիլն այսպիսի մի խաղ է հանդիպել: Մի գծի վրա ծիծաղելի հրեշներ են շարված, որոնց պետք է ոչնչացնել նրանց վրա կրակելով: Հրեշներից յուրաքանչյուրը որոշակի $h[i]$ «կյանք» ունի, որը բնական թիվ է: Էմիլն ամեն անգամ կարող է կրակել միայն մեկ հրեշի վրա: Այդ դեպքում այդ հրեշի «կյանքը» փոքրանում է a -ով, բայց նաև մնացած բոլոր հրեշներից յուրաքանչյուրի «կյանքը» սարսափից փոքրանում է b -ով, ընդ որում $b < a$: Եթե փոքրանալու տեղ չկա, հրեշի «կյանքը», պարզպես, զրոյանում է, «կյանքը» չի կարող բացասական լինել:

Մի 5 րոպե խաղալուց, և հրեշների ճղճղան ձայներից հոգնելուց հետո, Էմիլի մոտ հարց առաջացավ՝ իսկ մինիմումը քանի՞ կրակոց է պետք արձակել, բոլոր հրեշներին սպանելու, այսինքն նրանց «կյանք»-երը զրոյացնելու համար:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է երեք թիվ՝ հրեշների n ($1 \leq n \leq 1000$) քանակը, ապա a և b ($1 \leq b < a \leq 10^9$) թվերը: Երկրորդ տողում տրված են n բնական թվեր, որոնք իրարից անջատված են մեկական բացատանիշով, հրեշների $h[i]$ «կյանք»-երը ($1 \leq h[i] \leq 10^9$):

Ելքային տվյալներ

Հարկավոր է արտածել մեկ թիվ՝ բոլոր հրեշներին ոչնչացնելու համար մինիմալ կրակոցների քանակը:

Օրինակ

| | |
|-------|-----|
| Մուտք | Ելք |
|-------|-----|

| | |
|-------|---|
| 3 3 1 | 3 |
| 7 2 5 | |

Օրինակի պարզաբանումը

Էմիլը կարող է երկու անգամ կրակել առաջին հրեշի վրա, արդյունքում նրան կմնա մեկ «կյանք», իսկ մյուս երկու հրեշների «կյանք»-երը կփոքրանան 2-ով և կլինեն 0 և 3: Այդ ժամանակ Էմիլը կկրակի 3-րդ հրեշի վրա և այդ կրակոցից հետո բոլոր երեքն էլ կգրոյանան:

Ենթախնդիրներ

Ենթախնդիր 0, (0 միավոր) Օրինակը,

Ենթախնդիր 1, (20 միավոր) $b = 0, n \leq 10, a \leq 10^9$,

Ենթախնդիր 2, (38 միավոր) $n \leq 1000, h[i] \leq 1000$,

Ենթախնդիր 3, (42 միավոր) Լրացուցիչ սահմանափակումներ չկան: